

Hay Mitk'ë

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Frangian, E. (1889-1930). Hay Mitk'ë. 1925.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici pour accéder aux tarifs et à la licence](#)

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment possible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

L 1.42

P15

1319

ՄԱՏԵՆԱՇԱՐ "ՅՈՒՍԱԲԵՐ", ԹԻՒ 12

ԴՐ. Ե. ՖՐԱՆԳԵԱՆ

ՀԱՅ ՄԻՏՔԸ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Հրատարակութիւն՝

«Հ. Փէջրիջեան Գրական Ֆունդ»-ի



ԳԱՀԻՐԵ
ՅՈՒՍԱՇԱՐ "ՅՈՒՍԱԲԵՐ",
1995

Figure 1. A schematic diagram of the experimental setup used to measure the effect of the magnetic field on the absorption coefficient.

Chlorophyll a fluorescence

二十九、《中庸》：「天命之謂性。」

1. *Hydrogen* (H) is the most abundant element in the universe.

10. The following table shows the number of hours worked by each employee in a company.

41293554

ՄԱՏԵՆԱՇԱՐ "ՎՅՈՒՍԱԲԵՐ", ԹԻՒ 12

ԴՐ. Ե. ՖՐԱՆԳԵԱՆ

ՀԱՅ ՄԻՏՔԸ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

ԻՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Հրատարակութիւն
«Հ. ՓԵՀՐԻՉԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՁՈՆՏ»-Ի




ԳԱՀԻՐԵ

ՏՊԱՐԱՆ "ՎՅՈՒՍԱԲԵՐ",

1925

2008-161234





ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Հայ իմաստասէրք .— Խրիմեանը բնածին
հանճար .— Հոյածին բարոյական դեմք .— Գի-
տուրեան դերվիշ .— Նա մեծ էն [ամբողջական
մարդ էր .

Ամէն անգամ , երբ խօսք է լինում Խրիմ-
եանի մասին , երբ թերթում եմ նրա այս կամ
այն գրւածքը և կամ ծանօթանում նրա կեան-
քի այս ու այն շրջանի հետ , միշտ իմ աչքի
առաջ պատկերանում է հայ իմաստասէրի
կերպարանքը , նման յոյն իմաստասէրների ,
մի Սոկրատի , մի Պլատոնի և այլն : Եւ թւում
է , թէ հայ աշխարհում , մեր կեանքի և գրա-
կանութեան մէջ , չկայ մէկ ուրիշը , որին
այդ որոշիչը —իմաստասէր— այնքան յատ-
կանշական լինէր , որքան Խրիմեանին :

Յոյն իմաստասէրների նման՝ Խրիմեանն էլ
շրջում էր անդադար , երեւում հայ աշխարհի
այս կամ այն անկիւնը , հաւաքում իր շուրջը

աշակերտներ, ուսուցանում կեանքի իմաստութիւնը, տարածում լոյս ու գիտութիւն, քերում ժողովրդին ինքնազբակցութեան և ցոյց տալիս կեանքի ուղիղ ճամբան :

Նա մի անգամ յայտնուում է Վարագում, հաւաքում Վասպուրականի երիտասարդներին, հիմնում դպրոց, տալիս կեանքի դասեր, վառում գիտութեան ջահը :

Մէկ էլ նա երեւում է պատմական եւ գեղեցիկ Տարօնում՝ Ս. Կարապետի վանքում։ Մի աննման և աննախընթաց արշաւ էր այդ, լոյսի և գիտութեան արշաւ, որ տեղի ունեցաւ 1862 թւին։ Խրիմեանը իր հետ վերցրել էր մամուլ, տպագրական մի շարք անհրաժեշտ պարագաներ, գրաշարներ, ուսուցիչներ ևայլն։ Այսուղ ևս նա բարձրացրեց գիտութեան եւ լոյսի ջահը, վառեց երիտասարդների սիրուր։

Եւ այսպէս նու անընդհատ շրջում էր հայ աշխարհը։ Այս էր նրա բնական և վեհ կոչումը։ Եւ առանց պատճառի չէ, որ նրան կոչում են արեւելեան գէրվիչ, թափառական գէրվիչ, նման այն գէրվիչի, որ անդադար շրջում է, քարոզում մարզարէի խօսքը, հնչեցնում կեանքի իմաստութիւնը։ «Խրիմեանը մտատիպարն է մի բարձր քահանայի։ Նա մի կերպարանք է, որ դուրս է քայլում ուղղակի Հին Կտակարանից աստուածաշնչային կրակովն և բոլոր բանաստեղծութեամբ»։

Այսպէս է բնորոշում Խրիմեանին մի եւրոպացի մարդ՝ Հինչը :

Խրիմեանը մի բնածին հանճար էր : Այն ինչ նա քարոզում էր — նրա իմաստութիւնը — արհեստական չէր, անհող, վերացական կերպով ձեռք բերւած, խորթ և օտար նրա հոգու համար : Այդ ամէնը ինքնարուղին էր, ինքնածին, իր անհատական ապրումների, զիտողութիւնների, փորձի անմիջական արդիւնք :

Խրիմեանը զարմանալի ինտուիցիայի տէր էր, բացառիկ օրինակ մեր իրականութեան մէջ, Անմիջական հայեցողութեան միջոցով էր նա ձեռք բերել իր ամբողջ զիտութիւնը, իմացականութիւնը հայ աշխարհի, մարդկութեան և իրերի մասին առհասարակ : Հէնց դրանումն է Խրիմեանի մեծութիւնը, նրա գրաւչութիւնը :

Վասպուրականի Արծիւը միաժամանակ հայածին էր, հարազատ հայ՝ իր խոհերով եւ ձգտումներով, իր տենչերով և իդէալով, կարճ, նա հայ էր իր ամբողջ էութեամբ : Հայ կեանքի և իրականութեան, հայ ժողովուրդի և պատմութեան իմաստութիւնն է խօսում նրա բերանով : Նրա իմաստութիւնը օտարարոյս չէ, արհեստական կերպով պատւաստած, այլ հայ հարազատ հողի վրայ աճած, և հէնց այդ պատճառով էլ հայրենի հողի մէջ խորարմատներ է ձգած : Աչինչ չէայ օտար հայ

իրականութեան համար, վերացական կերպով կառուցւած։ Նրա ամէն մի խօսքը հայ կեանքի անմիջական թելադրութիւնն ու արգասիքն է։

Այդ իսկ պատճառով էլ Խրիմեանը մեծ էր։ Նա չէր այցելել գիտութեան տաճարներ—համալսարան և ոչ էլ միջնակարգ դպրոց։ Բայց նա այցելել էր կեանքի կենզանի կաճառը, սովորել էր կեանքի դպրոցում, որ աւելի գժւարին, բայց և՛ աւելի բեղմնաւոր է, քան միւս կաճառը։ Վանի մեծ իմաստաէրը միշտ այն կեանքը «մտիկ լնելով» ուսած էր եւ գուրս բերած իր իմաստութիւնը։ Այս է ասում նա իր մասին «Պապիկ եւ Թոռնիկ»-ի մէջ։

Խրիմեանը բարոյականի մի մեծ զէմք էր։ Թերեւս եղակի հայ աշխարհում, պարզ եւ բիւրեղ, պարզութեան և ճշմարտութեան քուրմ։ Նա վարչական մարդ չէր և ոչ էլ դիւանագէտ։ Այս տեսակէտից նա ճիշտ բնորոշեց իրեն Բերլինի Վեհաժողովում, եւ նրա կաթողիկոսութիւնը պիտի համարել մի թիւրիմացութիւն, մի վրիպում նրա կեանքում։ Դրա մէջ չէր։ և այդտեղ չպէտք է որոնել նրա մեծութիւնը, նրա հմայքը։ Էնդհակառակը, կաթողիկոսանալով՝ նա մի յայտնի չափով նւաստացաւ, որպէս բարոյական հեղինակութիւն, որպէս մտքի և հոգու մեծութիւն, Բնածին ա-

ռաքեալը և գիտութեան դէրպիշը ծնւած չէք
վարչական գործունէութեան համար։ Այսպէս
պէտք է նայել Վասպուրականի Արծւի վրայ։
այլապէս անկարելի է պատկերացնել և հաս-
կանալ նրա մեծութիւնը։ Նրա կոչումն էր ա-
զատ սաւառնել հայ աշխարհի վրայ, ամենու-
րեք քարողել և տարածել իմաստութիւն, լոյս
և գիտութիւն, ժողովրդին առաջնորդել դէպի
բարոյական և բնական կարգեր, դէպի շիտակ
քողուքակրթութիւն, մաքուր բարքեր։

Նա մեր կեանքի ամենամեծ վերածնիշ-
ներից մէկն է, թէեւ հոգեւորական . . .

Այդպէս է երեւում մեզ Մկրտիչ Խրիմ-
եանն ամէն տեղ և ամէն ձևի մէջ։ Նա բա-
րոյախօս և ժողովրդի առաջնորդ է և՛ իր հրա-
պարականութեան գրւածքներում, ցրւած
«Արծիւ Վասպուրականի» էջերում, և՛ գիտա-
կան աշխատութիւնների ու առօրեայ զրոյց-
ների մէջ, և՛ իր հռչակաւոր սրամիտ ու ի-
մաստալից քարոզների ու հետաքրքրական
նամակների մէջ։ Նա ամէն տեղ վառվռուն
Հայրիկն է, հայ ժողովրդի առաջնորդը։ Նրա
իւրաքանչիւր աշխատութիւնը մի մի գերազան-
ցապէս իմաստափրական բարոյագիտական
գործ է, կեանքի իմաստութիւն և առաջնոր-
դութիւն։ Խրիմեանն անգամ իր առօրէական
կեանքում, ամենասովորական խօսակցութիւն-
ների միջոցին, իր սրամիտ կատակներում բա-

րոյախօս էր, կեանքի դասեր աւանդող :

Եւ այդպէս թարմ, կենսալից և հետաքրքիր մնաց նա մինչև խորին ծերութիւն, մինչև
մահ :

Մեծ հայրենասէր լինելով՝ նա միաժամանակ խոշոր մարդ էր՝ լրիւ և ամբողջական։
Նա ունէր լայն սիրու, մեծ հոգի, քրիստոնեայի անհատնում համբերութիւն։ Զկայ որևէ
կեղծ շեշտ և գիծ նրա գրւած քններում և կեանքում։ Եւ եթէ նա պահանջում և քարոզում
էր յետ գնալ դեպի ընական և բարոյական օրէնքներն ու կարգերը, — այդ բղխում էր անմիջապէս նրա էռութիւնից։ Թարոյականը եւ
բնականը այդ մարդու մէջ ի մի էին ձուլած՝ մի ներգաշնակ ամբողջութիւն կազմելով։
Իյս տեսակէտից նրա կեանքից և գործունէութիւնից բնական ձեւով բղխում է մի ամբողջական և գեղեցիկ վարդապետութիւն, մի միաձոյլ աշխարհայեցողութիւն, թէև երբեք
նա չի աշխատել այդ ուղղութեամբ։

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Խրիմեանի աշխարհայեցողութեան հիմնական գծերը .— Ամեն ինչ ժողովրդի համար եւ նրա տեսակետով .— «Ժողովուրդ» ասելով ինչ է հասկանում .— Նրա աշխատանքի սկզբունքը — Խրիմեանը՝ գիւղացիութեան զաղափարախօս .— «Հոդ եւ ազատութիւն» նշանաբանը :

I

Լինելով ժողովրդի հարազատ զաւակը , Խրիմեանի մտածումների և գործունէութեան առարկան էր հէնց այդ Մայր-ժողովուրդը :

Այդպէս է եղած նա իր դիտակցական կեանքի , իր հասարակական գործունէութեան առաջին օրերից մինչեւ խորին ծերութիւն . Ամեն ինչ ժողովրդի համար եւ ժողովրդի տեսակետով — ահա նրա դեկավոր տեսակէտը : Նա մեր կեանքի և զրականութեան լաւագոյն նարօդնիկներից էր :

Դեռ ևս քառասնական թւականներին , երբ նա դեռ հոգեւոր կոչումն ընդունած չէր

և մի վառվռաւն երիտասարդ էր, զաւառից կ. Պոլիս գալով, առաջին անգամ հնչեցնում է ժողովրդի ձայնը. խօսում է բուն երկրի մասին, մայր-ժողովրդի և կարիքների ու ցաւերի, հարստահարութիւնների ու ձնշումների, պահանջների ու իրաւունքների մասին:

Այդ օրւանից արդէն մի անգամ և ընդմիշտ գծւած էր նրա կեանքի ու գործունէութեան ուղին. Հոգեւոր կոչումն ևս ոչ մի շեղում, ոչ մի էական փոփոխութիւն չմտցրեց նրա գործունէութեան և աշխարհայեցողութեան մէջ:

«Հրամիրակ Արարատեան» հայրենաշունչ և կրակուտ բանաստեղծութիւնը աւելի ևս հմայք ստեղծեց Խրիմեանի անւան շուրջը, և նա գործաւ մի անգամից կենտրոնական և հեղինակաւոր անձնաւորութիւն:

Բուն երկիրը, մայր-ժողովուրդը — ահա հայ առաջաւոր մտաւորականութեան գործունէութեան տուրքական և դաշտը: Այս սկզբունքն էր դնում գաւառացի երիտասարդ մտաւորականը: Նոր խօսք էր այս արեւմտահայ կեանքի և գրականութեան մէջ, մանաւանդ այդպէս շեշտակի և ուժեղ ձեւի մէջ դրւած:

Այնուհետեւ Խրիմեանը արագ բարձրացու մի շարք աստիճաններով, հասնելով մինչեւ կաթողիկոսութեան, բայց նա մնաց միշտ իր ժողովրդի հետ, իրեւ ժողովրդի աննման

պաշտպան և առաջնորդ :

Այդպէս է եղած Վարագում և Ս. Կարապետի վանքում վանահայր-Խրիմեանը, Կ. Պոլսում՝ պատրիարք-Խրիմեանը և Էջմիածընում՝ կաթողիկոս-Խրիմեանը : Մուսահայ եւ կեղեցական կալւածքների բռնագրաւման միջոցին, հայ ժողովրդի այդ ընդվզումի օրերին, դարձեալ ծերունազարդ Հայրիկն էր, որ առաջնորդում էր ժողովուրդը՝ իր արգար իրաւունքների ու ազատութեան ճանապարհին :

II

Բայց ի՞նչ բովանդակութիւն է դնում «ժողովուրդ» գաղափարի մէջ մեծ նարօդնիկը, հայ ժողովրդի Հայրիկը. «Ժողովուրդ» հասկացութիւնը, անկասկած, խիստ առաձգական է. ամէն մէկն իր ձեւով է հասկանում և ժողովրդի անունից խօսում : Բայց Խրիմեանի համար այդ գաղափարն ունէր իր պարզ ու սրոշ բովանդակութիւնը : Ժողովուրդ ասելով նա հասկանում էր մարդկութեան աշխատանքը մասը :

Խօսելով ժողովրդի մասին՝ նա միշտ էլ նկատի ունէր «շինական» ժողովուրդը, «մշակ» ժողովուրդը : «Դաշտային գիւղերու բնակիչ աշխատաւոր և հաց վաստակող մշակ՝ ժողո-

վուրդն է» *) Այսպէս է նա բնորոշում ժողովուրդ հասկացողութիւնը : Եւ առհասարակ նրա ամէն մի աշխատութիւնը գրւած է ժողովրդի համար, «մշակ» և գիւղացի ժողովրդի համար : Նրա գրւածքներում, անգամ հրապարակախօսական յօդւածներում, այդ ընդհանուր գիծն է անցնում կարմիր թելի նման, այդ ոգին է տիբապետում :

Ժողովուրդը, աշխատաւո՛ր ժողովուրդը մի բարձր, անգամ գերազոյն արժէք է Վանի իմաստասէրի համար : Ժողովուրդն է մարդկութեան հիմքը, «բուն արմատ և մայր ամէն կարգի և վիճակի մարդոց» : Ժողովուրդն է «աշխարհիս մեծագոյն շինարար մասը», ժողովուրդը «աշխատութեան մայրն է» **), ժողովուրդը միաժամանակ մարդկութեան ստեղծագործ ոյժն է, նրա սիւնը, որ եթէ մի ըռապէ դադարէ գոյութիւն ունենալուց, կը խախտուի նաև աշխարհաշէնքի հիմքը :

Վասպուրականի մեծ բարոյագէտը աշխատաւոր ժողովրդի, աշխատաւոր գիւղացիութեան ազնիւ գաղափարախօսն է, նրա շահեցի և իրաւունքների աներեր ու համոզւած պաշտպանը, նրա անկեղծ բարեկամը, վերջապէս՝ նրա՝ «Հայրիկը» : Ո՞չ մէկի համար այնպէս

*) Սիրաք եւ Սամուել, էջ 68

**) Սիրաք եւ Սամուել, էջ 68-99

բնորոշիչ չէ այդ յատկանից, որքան Մկրտիչ
Խրիմեանի համար — Փողովրդի հայրիկը։ Այլ
կերպ էլ «մշակ» ժողովուրդը չէր ճանաչում
Վասպուրականի Արծւին։

Խրիմեանը ուամկավար էր, ազնիւ և հա-
մոզւած ռամկավար։ Նա իր ամբողջ կեան-
քում անսայթաք հետեւեց ռամկավարութեան,
միշտ էլ բարձր պահեց «ռամիկի», այդ ար-
համարւածի պատիւք, այդ «մայր-աշխատա-
ւորի» արժէքը։ Բայց նու չէր քարոզում մի-
այն, այլ և կեանքում, գործի մէջ ցոյց էր
տալիս — Պատմում են, թէ ինչպէս մի ան-
գամ կ . Պօլսում ամիրաները, ազգի ջօջերը
այցի են գալիս պատրիարք Խրիմեանին, բայց
վերջինս մերժում է նրանց ընդունել, որով-
հետեւ այդ ժամիննրամօտ կային «մշակներ»։
Անկասկած, ազգի «մեծերի» համար անհաս-
կանալի էր այդ երեսոյթը և նրանք զայրու-
թով, ոև ոխով լցւած՝ հեռացան պատրիար-
քարանից, դառնալով նրա թշնամիները։

Բայց մեծ ժողովրդասէր հագեւորականը
մի նշանախեց անգամ չփոխեց իր ընթացքը։
իր ռամկասիրութիւնը։ Եւ չէր էլ կարող փո-
խել, որովհետեւ այդ իր խորին համոզմանքն
էր, իր էութիւնը։

III

Խրիմեանի աշխարհայեցողութեան վերեւ
ընդգծած հիմնական գրութեան հետ անբաժան
կերպով կապւած է մի բարձր գաղափար—աշ-
խատանքի սկզբունքը։ Խրիմեանը դնում է աշ-
խատանքի պաշտամունքը։ աշխատանքը ստեղ-
ծագործ է, աշխատանքը ազնւացնող է։ Այս-
պէս բարձր է նա գնոհատում աշխատանքը։

Բայց այդ ևս լոկ քարոզ և վերացական
բան չէր նրա բերանում, նա ինքը կեանքում
մի ազնիւ աշխատաւոր էր միշտ։

Աշխատանքը է՛լ աւելի բարձր իմաստ ու-
նէր մշակ ժողովրդի Հայրիկի համար։ Աշխա-
տանքը մարդու եռեթիւնն է կազմում, մար-
դու էական յատկանիշը։ Մարդը իր աշխա-
տանքով է միայն մարդ։

Խրիմեանը աշխարհը նմանեցնում է մի
մեծ ագարակի, և մարդը այդ ագարակին մէջ
մի գործաւոր մշակ է։ Մարդը քանի կեանք
ունի, պարտաւոր է անդագար աշխատել, ա-
ռաջ տանել երկրի մշակոյթը։ արդիւնաւորել
աշխարհը, այդ մեծ ագարակը։ Այս է մարդու
կռչումը։ Շեղւել այս ուղիից, չկատարել իր
այս կռչումը, նշանակում է մարդ լինելուց
գաղարել։ Աշխատանքը մարդու «կեանքը ար-

գիւնաւորող Աստծու օրհնած սերմն է» *) ։
Կարճ, աշխարհը և ամէն ինչ դրւած է ստեղծագործ աշխատանքի վրայ։

Առանց աշխատանքի՝ կեանքը և՛ դադարկ
է և՛ անիրաւ։ Իւրաքանչիւր մարդու բարու-
յական և բնական կոչումը աշխատանքն է։
Ամէն մի մարդ պէտք է ապրէ իր սեփական
աշխատանքով և աչք չդնէ ուրիշի աշխատան-
քի վրայ։ Այս էր քարոզում և բարոյախօ-
սում Խրիմեանը։ «Զվաստակս ձեռաց քոց
կերեսցես, երանի քեզ և բարի եղիցես»։
«Զգուշացիր, խրատում է Խրիմեանը, կաթիլ
մի ուրիշի ճակտի քրտինքէն չխառնես քոց
քրտնաց հետ»։ Բատ մեր բարոյագէտի, ար-
դար է միայն այն մարդը, որ իր սեփական
աշխատանքով, իր «քրտնաց հացով» կապրի,
իսկ «անիրաւ է այն մարդը, որ առանց աշ-
խատութեան ուրիշի քրտնաց հացը կ'ուտէ լի-
զրկանքներով» **)։

«Միթէ նա, որ յափշտակեց ընկերին հաց,
նա կո՞ւշա պիտի ուտէ։ Ոչ, ոչ. զրկանաց ու
յափշտակուր հաց առաւօտէն մինչև իրիկուն
չի տեւեր»։ (Էջ 28. Վանգոյժ)։

Եթէ աշխարհը այս բարձր և արդար սկզ-
բունքի վրայ դրւած լինէր, միանգամայն տար-

*) Սիրաք եւ Սամուել, էջ 84

**) Պապիկ եւ Թոռնիկ, էջ 3։

բեր բնոյթ կ'ունենար նա, քան այժմ ունի Այժմեան աշխարհը, — հայկական և ընդհանուր, — չեղւել է այս ճամբից, բնական եւ արդար աշխարհը չէ այս .— աշխատաւոր մշակ գիւղացին իր ճակատի քրտինքի, իր հալալ աշխատանքի տէրը չէ: Արդի աշխարհի ամենավիրաւոր և անիրաւ կողմն է այս: Խրիմեանը ճանաչում է երկու մեծ դասակարդ: — մի կողմ կանգնած է մշակ ժողովուրդը, որ իրաւագուրկ է միանգամայն և անդադար հարստահարւում է, իսկ միւս կողմում կանգնած են իրաւատէրերը, հարստահարողները, ճընշողները, բո՛լոր նրանք, որոնք չեն աշխատում և ապրում են ուրիշի աշխատանքով: Հայ բարոյագէտը ցաւով է յիշատակում մեր անիրաւ աշխարհի այս անիրաւ կարգը ու իրականութիւնը, որ մշակ ժողովուրդը «զօր հանապազ չարաչար կը տքնի և քրտինք կը թափէ մարդկային յառաջաղիմութեան համար, բայց նա իր յառաջ բերած արդիւնքն խիստ նւազ և յոռի մասը կը վայելէ» *): Զկայ աշխատանքի և վայելքի հաւասար ու արդար բաշխում, ինչ կամենում և քարոզում է Խրիմեանը: «Երանի թէ իւրաքանչիւր մարդոց աշխատութեան հաց՝ իւր բերանը հասնէր, զի մարդիկ կան, որ բիւրաւոր մարդոց աշ-

*) Սիրաք եւ Սամուել, էջ 71

ինաւութեան հաց իրենք կուտեն)) :

Եւ այդ հսրստահարողները, առանց քըրտինքի վայելողները, կազմում են մարդկութեան փոքր, ամենաչնչին մասը, մինչդեռ հարստահարւածների, «զրկեալների դասը ամենամեծ մասն է, և անչափելի են այն բազմադիմի զրկանքներ, որ կլինեն արեւուն տակ, աշխարհիս վրայ» և որոնց ենթարկւում է մարդկութեան այդ մեծագոյն, աշխատաւոր գաղմութիւնը :

Խրիմեանք միշտ էլ պաշտպանել է ժողովրդի շահերը, պայքարել ժողովրդի իրաւունքների համար. կռւել աղաների և ամիրաների տիրող անարդար կարգերի դէմ և հաւասարութեան ու ճշմարտութեան, աշխատանքի եւ վայելքի հաւասար բաշխման համար, թէև հոգեւորական, թայց նրա կեանքը եղել է մի պեղեցիկ պայքար, նա հանդիսացել է մեր հաւարակական կեանքում մի աննման մարտիկ :

IV

Հողն է մարդու, աշխատաւո՞ր մարդու գոյութեան առաջին և գլխաւոր հիմքը :

Այս է գիւղացիութեան ազնիւ գաղափարախօսի մի հիմնական միտքը, որ անմիջապէս և տրամաբանօրէն բղխում է այն բոլո-

թից, ինչ մինչեւ այժմ տեւեց:

Ժողովրդի «հարստութեան առաջին եւ մշտնջենաւոր աղբիւրը հողն ու երկիրն» է *), ասում է Խրիմեան, Բայց հողի հետ անքաժան կերպով կապւած է աշխատանքը. Հողը արգասաւոր է դառնում միայն մարզու աշխատութեան հետ միասին. Այդ երկու ոյժի միացած գործն է միայն ստեղծագործական. Հող և աշխատանք— ահա գլխաւոր գործօնները մեր մշակոյթի:

Ենելով իր այս ընդհանուր տեսակէտից, Խրիմեանը մեր աղքատութեան աղբիւրի միակն «անաշխատ ձեռքն» է համարում. «Երկրագործութեան» նշանաւոր հեղինակի, Միքայէլ Նալբանդեանի և Խրիմեանի հայեցակէտերի մէջ այս տեսակէտից զգալի նմանութիւն կայ, Մեր կեանքի և գրականութեան այս երկու վետերանները— Նալբանդեան և Խրիմեան— ներկայանում են միևնոյն իդէօլօգիայի ներկայացուցիչներ— երկրագործութեան և գիւղացիութեան գաղափարախօսներ։ Խրիմեանի «Պապիկ եւ Թոռնիկ» աշխատութիւնը, որ գրւած է յատկապէս գիւղացի, մշակ եւ հողագործ ժողովրդի համար, նողի գեղեցիկ երգն է, մի ամբողջ ներբող։ «Միրելի գիւղացի ժողովուրդ, քեզ համար գրեցի այս գիրքը,

*) Սիրաք եւ Սամուել, էջ 90.

որ դու քո հայրենատուր հողն ու դաշտը սիրեա և երբեք չբաժանւես»։ Նա յորդորում է սիրել հողը, որովհետեւ զիւզացու կեանքը։ «Հողն է և հողագործութեան արդար և հալալ վաստակ»։ «Օրհնեալ է հողն ու սերմեր, օրհնեալ՝ մշակի եզնամոլներ»։ Նա ներբող է կարդում հողի հասցէին և յորդորում է զիւզացիութեան դէպի երկրագործութիւնը, որովհետեւ «աշխարհիս բովանդակ մարդոց սնունդ և կեանք հողագործութեան արդիւնքն է»։ Սիրիր հողը, նա պէ՛տք է միշտ՝ թէ «կենաց և թէ մահու օրը»։ Խրիմեանը խրատում է չբաժանւել մայր-հողից, չլքել և չծախել նրան, այլ, ընդհակառակը, փայփայել, մշակել և արդիւնաւորել։ «Ի՞նչ աւելի արդար, ազատ և անխարդախ վաստակ կայ աշխարհիս վրայ, քան հողագործութիւնը»։ Թռոնիկը թէև ամուսնացած էր, բայց պապիկը կրկին ամուսնացնում է նրան։ Տարբեր ամուսնութիւն է այս և խիստ բնորոշ Խրիմեանի աշխարհայեցողութեան համար։ — «Սիրելի թռոնիկ, դու մի կարծիր, որ եկեղեցու կամ քահանայի պսակ քեզ բաւական է։ Լծեցէք գութան, դու տես հիմի, թռոնի՛կ, թէ ինչպէս պիտի պսակեմ զքեզ։ Գնա՛ նախ գոմէշներուն և եզներուն ճակատները համբուրէ, արի գութանին մաճին քով խանարհիր գետին՝ մայրենի հող համբուրէ, ձեռքս մաճին

Վրայ դրած եմ, համբուրէ պապկի ձեռք եւ
մաճ. ահա քառասուն տարւան մաճկալ պա-
պիկ, այսօր քեզ կը յանձնէ մաճկալութեան
վսեմագոյն պաշտօնը»*) (ընդգծումն իմն է.
Ե. Ֆ.), եւ պապիկը թոռնիկի գլխին դնում
է «ցորենաբոյսից շինած մի գեղեցիկ պսակ»
և կտակում է, որ երբեք թոռնիկը չվերցնի
այդ պսակը, և երբ կը ծերանայ, այդ պսա-
կը կը դնի իր անդրանիկ որդու գլխին ու
այսպէս անընդհատ ժառանգաբար . . . Նա
պսակում է թոռնիկին հողի հետ, գութանի
հետ. դաշտի մշակութեան հետ . . .

Ահա այսպէս բարձր իմաստ ունէր այդ
խորհրդաւոր պսակը:

Հողի և հողագործութեան մէջ աննման
կրօնաւոր-բարոյագէտը մի այլ խոր իմաստ,
բարձր արժէք ևս տեսնում էր և դնում. — Նա
թոռնիկին պսակելով հողի հետ, յորդոր է կար-
դում՝ պինդ զրկել հողը և թոյլ չտալ, որ ու-
րիշները ձեռքից յափշտակեն և նա անհող մնայ,
«ստրոկ դառնայ», երթայ ուրիշի դռներ
վարձկան մշակ դառնայ»**) : Այսպէս հողի գա-
զափարի հետ կապւած է նաեւ ազատութեան
գաղափարը, ազատ, մարդավայել կեանքի

*) Պապիկ եւ թոռնիկ, էջ 49.

**) Պապիկ եւ թոռնիկ, էջ 152.

հասկացողութիւնը։ Հողը մարդու գոյութեան
և ազատութեան հիմքն է, յենարանը։ Հող եւ
ազատութիւն — մէկը առանց միւսի անհաս-
կանալի է։ Խօսս նարօդնիկական հասարակա-
գիտական դպրոցի գլխաւոր նշանաբանն-էր
այս Բայց Խրիմեանը այդ պահանջը չի վեր-
ցրել ուսս մտածողներից, այլ մեր հարազատ
կեանքի և իրականութեան արդիւնք է։ Եւ
Խրիմեանը մշտապէս պայմանագրել է գաւառացի
հայերի պանդիստութեան գէմ, երբ լքել են
իրենց հայրենի հողը և պնացել հնուաւոր եր-
կիրներ, Կ. Պոլիս և այլուր, և այսպիսով
կորցրել են իրենց ազատութիւնը, մարդկա-
յին արժանաւորութիւնը, դառնել են ստրուկ և
ուրիշների մօտ ծառայ։

Հողին և երկրագործութեան, առհասա-
րակ գիւղական ազատ տնտեսութեանը, այդ-
պէս մեծ և առաջնակարգ դեր ու նշանակու-
թիւն վերագրելով, Խրիմեանը իր գործու-
նէութեան ընթացքում անդազար աշխատում
էր բարեփոխել տիրող աննպաստ պայմանները, երկրագործութիւնը բարձրացնել նահապետա-
կան դրութիւնից։ Այդ հոգեւորականն է ա-
ռաջին անգամ Հայաստանի գաւառը մտցրել
եւրոպական երկրագործական գործիքներ, ցոյց
տւել ժողովրդին կատարելագործւած միջոց-
ներով մշակել հողը։ Նոյնը և արհեստների վե-
րաբերմաբ։ Ու Խրիմեանը ուրոտք էր զնում,

իսկոյն վառում էր կրթութեան և գիտութեան ջահը, դնում դպրոցի հիմքը։ Դպրոց, դպրոց, դարձեալ դպրոց, ահա ինչ է հարկաւոր մեր գիւղացիութեան, ասում և կրկնում էր նա։

Բայց Խրիմեանի հիմնած դպրոցի անբաժան մասը կազմում էին արհեստները, երկրագործական - գիւղատնտեսական բաժինը։ Այդպէս էր նա Վարագում, այդպէս էր նա Տարօնում (Ս. Կարապետ)։ Միշտ էլ այս երկուսը, հող և գիտութիւն, տնտեսականը եւ քաղաքակրթութիւնը մի ներդաշնակ միութիւն, մի անբաժան ամբողջութիւն են կազմել նրա համար։ Մէկը առանց միւսի չի կարող լինել, մէկը առանց միւսի թերի է, անառողջ։ Նա մեծ տեղ էր տալիս տնտեսականին «վասնզի աշխարհիս վրայ հացի խնդիրը մեծ խնդիր է, զի մարդիկ հացով կ'ապրին»։

Նրա հոգին միշտ էլ հրճում էր, երբ տեսնում էր այդ միասնական, այդ առողջ աշխատանքը։ Խրիմեանի խորին համոզմունքով, առանց տնտեսական ապահովութեան, առանց արհեստի և գիւղատնտեսական բաժնի, մենք նոր սերնդից կը պատրաստենք միայն «ուսումնական թշուառներ»։

Խրիմեանը իր հողի երգը վերջացնում է մի կտակով, որ միանգամայն բնորոշ է նրա - աշխարհայեցողութեան, նրա մտորումների և

Կենսահայցողութեան համար :

«Ես կը մեռնեմ, թունիկ, զիս տարէք թաղեցէք մեր պատով արտի մէջ, որ զերեզմանոցի մօտ է։ Գերեզմանս փորել տուր արտի մը քունջ, ուր բարդի, ուռենի ծառեր կան։ Այնտեղ շատ եմ նստել և հանգստացնել» *)։

ԵՐԻՌԻԴԻ ԳԼՈՒԽ

Ի՞նչ է աշխարհի, կեանքը եւ մարդը. — Խրիմեանը հակամիլիտարիստ եւ «Թագաևորաց ժողով» պօեմը. — Այս աշխարհի դարմանը. — Իշխանութիւն եւ ժողովուրդ :

I

Մի այլ ազդակ, որ, հողից և աշխատանքից զատ, գերեզմանցապէս ազդում է և մեծապէս գեր է խաղում աշխարհում, բաղաքակրութիւնն է։

Հողից յնտոյ, նկատում է Խրիմեանը, մարդու հարստութեան երկրորդ ամենամեծ աղքիւրը գիտութիւնը և արւեստն են, որ նոր հարստութիւններ են երեւան քերում։

Այս էր Խրիմեանի համոզումը, և այդպէս էլ նա միշտ զեկավաբեռնում էր կեանքում։ Այդ երկուսը նրա համար միշտ էլ անբաժան էին միմեանցից։ Բայց քաղաքակրթութիւն

*) Պապիկ եւ Թոռնիկ, էջ 207.

ասելով՝ նա հասկանում էր շիտակ, ճշմարիտ քաղաքակրթութիւնը՝ գիտութիւնը և յոյսը։ Այդպիսի քաղաքակրթութիւնն, ահա մեծ դեր ունի աշխարհի և մարդու կենացքի բարեփոխման գործում, ազնւացման և բարձրացման մէջ։

Բայց արդի քաղաքակրթութիւնը չունի այդ կոչումը, այդ բարձր առաքինութիւնը։

Խրիմեանը մի կողմից յոռետես և միւս կողմից՝ լաւատես մտածող է։ Ծառ մտածողների, բարոյագէտների և սօցիալ-ֆիլիսոփաների աշխարհայեցողութիւնը կրում է այդ կրկնակի բնոյթը, ինչպէս՝ օրինակ՝ մի ժանաժակ Թուսսօի։ Սա յոռետես էր ներկայ կարգերի հանդէպ, իսկ լաւատես՝ ապագայի վերաբերմամբ։ Ճիշտ այդպէս էր նաև Խրիմեանի վերաբերումը և կենսահայեցողութիւնը։ Ներկայ աշխարհը վատ է ոչ միայն հայ աշխարհը, այլ աշխարհն ընդհանրապէս։ «Ներկայ քաղաքակիրթ աշխարհը վատ է», անվերապահ յայտաբարում է Խրիմեանը։ Իսկ ի՞նչու է վատ։ — Որովհետեւ նա թողել է «արդարութեան իրաւախոհութիւնը», միայն «կոիւ, սուր ու թնդանօթ ի գործ կը դնէ, արիւնով կը լւանայ կեանքը»։ Այդ հրազէն սպանիչ գործիքները իրեւ արգարութիւն ի գործ կը դնէ»^{*)}։ Այդպէս է նաև արդի քաղա-

^{*)} Սիրաք եւ Սամոնէլ, էջ 178.

քակրթութիւնը . նա դեռ ևս մահ է քերում , «դեռ մարդոց համար սպանութեան գործիքներ կը հնաբէ» : Աշխարհիս տիրապետներ և դիւանագէտներ քուն և հանգիստ չունեն . վիշտպի նման տուակի վրայ կեցած կը ֆշշան , կը սպառնան և ի՞նչ կը խնդրեն—պատերազմ , անշուշտ զիրար կլանելու համար» : *)

Խրիմեանը անվերտպահ և անպայման հակամիլիտարիստ էր : Իր աշխարհայեցողութեան այս հակամիլիտարիստական գիծը շեշտւած կերպով երեւան է գալիս իր ամէն մի գրւածքում , մանաւանդ «Սիրաք են Սամուել»-ի մէջ , իր անդրանիկ գրւածքն էլ — «Հայոցոյ» — ունի այդ շեշտը :

II

Բայց Խրիմեանի մահից յետոյ , պատերազմի ընթացքում , Անգլիայում , հայերէն եւ անգլիերէն , լոյս տեսաւ մի ձեռագիր չափածոյ գրւածք , մի սիրուն այօէմ , ոք գերազանցագէս հակամիլիտարիստական է , ուղղւած յատկապէս աշխարհի անիրաւ իշխողների եւ աւելիչ սպառազինման զէմ : Այս գրւածքի վերնագիրն է «Թագաւորաց ժողով» , գրւած 1900 թւին , էջմիածնում : «Մի օր նա (Խրիմեանը) տւաւ ինձ մի ձեռագիր՝ ասելով . «այս

*) Նոյն տեղը , էջ 204 .

այժմ կարող չէ լոյս տեսնել մեր օրհնեալ
Թուսիայում, առ հետդ, գուցէ հրատարակես
զայն մի օր ձեր ազատ Անգլիայում»։ Ահա
ինչ է առում «Թագանորաց ժողով»։ ի հրատա-
րակիչը՝ Տօնապետեանը ^{*}) :

«Թագանորաց ժողով»-ը մի մարդարէա-
կան գրւածք է։ Խրիմեանը մարդարէանում
էր ներկայօրերը : — Աշխարհի թոլոր վեհա-
պետները նստած են վեհաժողովի և խօսում են
այն մասին, թէ «ո՞վ հանգիստ քուն ունի գի-
շերը»։ Անգլիայի վեհապետը, «մեծ տիրա-
պետն ովկիանու»), յիշեցնում է իր «ահեղ նա-
ւատորմիղը»։ որ «անպարտելի է ի ծովին և
ովկիանոսն է իր պարիսպ»։ Եւ այդ պատճա-
ռավ անուշ է նրա քունը։ «Դերմանիայի «խը-
րոխտ ինքնապանծ կայսրը» յիշեցնում է իր
«կրթեալ զինւորութիւն», անպարտելի ահեղ
բանակ» և նրա «քնարանն է կրուպի թնդա-
նօթ»։ Թուսատանը առաջ է քաշում իր կո-
զակներին և նրանցով սպառնում։ Բայց «Թու-
սիայի վախը, նկատում է Խրիմեան, արեւել-
քից է, Զինաստանից, Եապոնիայից»։

Ապա խօսք է առնում Թիւրքիայի վեհա-
պետը, սուլթանը։ — «Ճեռք նորա յամանե-

^{*}) *The Meeting of the Kings by Khriemean, the Katholicos of all armenians, London, 1915 p. եջ 24.*

Նին, ամենեսուն ձեռն ի նայ: Սրանով է
սկսում նա և հարցնում:

Ո՞վ բագապանծ իշխանի երկրի,
Գիտէք արդեօք պատգամին միսք,
Զեր ձեռք բարեն զիս չորս կողմէն,
Իմ ձեռք բռներ ձեր օձիքէն.
Քարեցէք որչափ կամիք,
Եւ ես անշարժ մնամ ի կելքոն
Զնաշխարհիկ Բիւզանդիոն.
Վա'յ աւուրն, որ միանամ,
Զիս մի կողմէն բարեք ի բաց,
Այդ յաւիտեամ դուք չեք տեսնար,
Քանի դժւար է, դուք գիտէք.
Երբ խնդիր կայ բաժնի վերեն.
Որ առիւծն է եւ զօրաւոր,
Բաժին խնդրէ մեծ մեծ կտոր:
Հարցէք դուք այժմ, հանգիս է բունս.
Օրինեալ է Ասւած, խոր է իմ բուն.
Ես հաւատամ ճակատագրին
Չունիմ գլխոյս ոսկեբարձիկ,
Կամ քննանօթ այն Կրուպի.
Բայց ես ունիմ պատրաստ բարձեր,
Ժամանակին հետեւելով
Ըզմինն ընտրեմ, դնեմ գլխոյս.
Եւ ապահով ննջեմ ի բուն:

Բնորոշ է այն, որ Խրիմեանը արդարու-
թիւնը, իր խօսքը գրել է մի փոքրիկ միապե-
տի՝ Բելգիայի թագաւորի քերնում: Նա է յի-

շեցնում աչխարհի մեծ իշխողներին ճշմար-
տութիւնը .

«Ասացէք, ով վեհապես,
Թէ ո՞ւմ վրայ է հաստատոն
Զեր գանձ, արոռ եւ ժեռութիւն .
Դուք կարծում եք, թէ գանձ, արոռ
կարէ ինքնին կալ հաստատոն,
Եթէ չունիցի նա պատշաճան
Հաւատարիմ իւր ժողովուրդ:
Աշխատեցէք, ով վեհապես,
Զեր պատշաճան հաստա պահել
Հաւատարիմ ժողովրդով:
Քանի որ կայ մեր այս աշխարհ,
Պիտոյ է միւս աշխարհավար,
Թագաւոր ժողովրդին
Եւ ժողովուրդ՝ թագաւորին:
Արդ ես ասեմ, ինչ է իմ բարձ,
Գուցէ իննդաք եւ զարմանաք.
Ժողովրդի սիրտն է իւր բարձ,
Բել նիոյ նեղ թագաւորին
Ուր ես գլխիկս դնեմ խաղաղ:
Յանկալի է, յոյժ ցանկալի,
Խաղաղութիւն մեր աշխարհին,
Խաղաղութիւն թագաւորաց,
Խաղաղութիւն ժողովրդին.
Հերիք այսչափ մեծութեան տեսչ,
Բաւ եւ օաս է, սահման դրէք.
Հերիք անթիւ զենք ու բանակ,

Զինուրական տաւրք անհանակ . . .

Ազգեր ողջոյն հեծեն ողում,

Բողոքում են մինչեւ յերկին . . .

Բայ է, դրեք սուրբ ի պատեան,

Ողջունեցեք խաղաղութիւն։

Թագիայի թագաւորի խօսքեց յետոյ ,
աշխարհի քոլոս վճռապեսները ոտի են ելնում
և ասում.

«Կեցզէ, ասեն, Բելնիոյ քազ.

Նա քանի խօսեց նշանաւութեամբ ,

Աւետարան էր իւր բերան . . .

Բայց մենք գառնանք ի մեր քան։

Աւելի մէջբերումներ . քան այսպահի , ան-
կարող էի անել : Կարծում եմ այսքանն էլ
պարզ գաղափար է տալիս Արիմեանի այս վեր-
ջին ուշագրաւ աշխատաւ թեան ընոյթի մասին :
Անկատկած , այս գրւածքը ոչինչ էոր քան չի
տալիս և ոչինչ չի տեսլացնում Արիմեանի
փառքի և անւան վրայ : Նա առանց այդ եր-
կին էլ մեծ էր , և մանաւանդ այս գրւածքի
ոգին նոյնն է . Ինչ էրա նախկին գրւածքների :

III

Այսպէս , ամրօղջ աշխարհում թշւառու-
թիւնը համատարած է . Այսպիսի պատկեր ու-
նի աշխարհը Արիմեանի համար :

Բայց ո՞վ է այդ համատարած թշւառու-

թեան բուն պատճառը : — Մարդն է այդ , Մարդը չարին հակամէտ է : Աւելին , Մարդը ոճամէտ է . նա «չարաստեղծ և չարանար է» : «Մարդն իրրե հեղինակ իւր սրտին գործարանին մէջ կստեղծէ զչարն և կհանէ ի դուրս , և սա է թշւառութեան աղբիւրը» : *) «Խառնաբոյս կ'աճին» աշխարհ-ագարակի մէջ՝ ծաղիկներ և փուշեր , այսինքն՝ երջանկութիւն և ապերջանկութիւն : Եւ այդ բոյսերի մշակը մարդն է , «Աշխարհիս մեծ պատահարներ մարդիկ են և նոյնիսկ մարդն է մարդուն պատահար . Մարդոյն կենաց մէջ պատահարն ու պատիժը՝ դարձեալ նոյն ինքն մարդն է» : **) Այս «երկվտակ հոսանքներ» , չարութիւն եւ բարութիւն , գժքախտութիւն եւ երջանկութիւն կը ծաւալւեն մեր ընկերային կեանքի վրայ . Նրանք «համընթաց» են և «զուգածին» եղբայրներ :

Մեր աշխարհի կարգն է այս սկզբից ի վեր , և այսպէս պիտի տակաւին շարունակակի : Խրիմեանը չի հաւատում աշխարհի և մարդկութեան արագ վերածնունդին : Նա չի հաւատում , որովհետեւ մարդը դեռևս մի «անհալ և անկատար հանք է» :

Բայց նա հաւատում է աշխարհի վերջին վերածնունդին : — Նա իր մի նամակում , գրած

*) Սիրաք եւ Սամուել էջ , 160.

**) Սիրաք եւ Սամուել էջ 2 , 1-908 .

1877 թւին, մարտի 10-ին, ռուս-տաճկական պատերազմի միջոցին, Ներկայացնում է զրութիւնը և տալիս մարդկութեան վերածնունդի պատկերը : Խիստ իմաստալից և բնորոշ է այդ նամակը : «Քաղաքային մրրիկ մի է այս եւ կ'անցնի շուտով . խաչի, զոհի անձնուիրութեան ժամանակ է, ժողովուրդ, ազգեր և աշխարհ արեան գետեր պիտի անցնեն, կարմրին սրուկներ : Այս աշխարհիս ճակատագիրը ջուր և արիւն է . երկուքն ևս պէտք են զի երկուքն ևս մարդոց մեղքեր կը բանան : Ամեն ժամանակ իւր Մովսէսն ունի . մարդիկ պէտք է կարմիր ծովէն անցնեն և մկրտւին» : Խրիմեանը հաւատում է, որ կը գայ ժամանակ, երբ հնարաւոր կլինի «խցել չարին ակն, որ չարութիւն չրդիչ, և բանալ բարոյ ակն, որ բարութիւն բղիչ» : Իսկ այդ նպատակի համար պէտք է կուել մարդու դէմ, քանի որ նա է «մարդոյն մեծ պատահարը» : Նա ընդունում է, որ «երկրի բնական փուշեր հնագանդ են մարդոյն, և մարդ կարող է զանոնք արմատով քանդել եւ վերջը ծաղիկներ տնկել» : Մարդը ծնելիս ոչ բարի է և ոչ չար, հետեւապէս կարելի է նրան ցանկալի ուղղութիւն տալ և մեր ուղածի նման գաստիարակել :

IV

Բայց ի՞նչ է «դարման այս մեր հիւանդու և թշւառ աշխարհի» : Ի՞նչ միջոցներով

հնարաւոր է բուժել այս աշխարհը : Դաստիարակութիւնը, գիտութիւնը և քաղաքակրթութիւնը մէկն են այդ միջոցներից, և՝ զօրաւոր միջոցներից : Բայց դաստիարակութիւնը միայնակ անզօր է այդ չարիքի դէմ, որ «անչափ հին և խորարմատ» է : Խրիմեանը չի հաւատում նրաստիսրակութեան այդ անօրինակ ոյժին . նա չի հաւատում, թէ այդ հրաշքը, — մարդու «չարութեան ակն խցել կարող է միայն մարդու ձեռքը արհեստաւորէ» :

Նա հաւատում է այդ հրաշագործութեանը այն զէպքում միայն, եթէ «մարդոյն դաստիարակող ձեռքին հետ աւետարանի ոգին և ընկերութեան ձեռքն ես հրաշագործէ», յայնուամ կհաւատամ, թէ մեր ընկերական կեանք կը ծաղկազարդի և կ'ազատի չարութեան եւթշուառութեան փուշերէն» : Խրիմեանը հաւատում է, որ շիտակ կրթութիւնը և գիտութիւնը լոյս կը մտցնի այս աշխարհ, երբ «Աւետարան, ընկերութիւն և միաբան զօրութիւն» կը թագաւորէ աշխարհում, երբ, կարճ, ընական և բարոյական հիմունքների վրայ կը դրւի աշխարհը, մարդկային կեանքը : Աշխարհը խախտւել է, աշխարհը շեղւել է բարոյական և ընական օրէնքների ճամբից : Բարոյական և ընական հիմունքների վրայ պէտք է դնել բովանդակ ընկերային շէնքն—ընտանիք, պետութիւն, դաստիարակութիւն, քա-

զաքակրթութիւն։ Նա ընկերային կեանքին մեծ նշանակութիւն է տալիս — ընկերային միջավայրումն է ամէն ինչ աճում, մարդը զարգանում։ Մարդը զառնում է մարդ ընկերային կեանքում, առանց զրան նա ոչինչ է։

Աշխարհը շարժող ուժերը շատ են։ Նիւթականը զօրաւոր ազդակ է, Բայց միակը չե։ Նիւթականի, տնտեսականի հետ բարոյականն ես մեծ գործոն է։ Բայց Խրիմեանի, աշխարհը մարդուն տրւած չէ միայն որպէս «նիւթական կեանք»՝, որպէսզի մարդը վայելէ միայն երկրի բարիքը։ Մարդու մեծ կոչումն է եւ այն, որ «նիւթականի հետ կապէ բարոյական կեանք»։ Մարդն աննպատակ ծնած չէ։ Նա աշխարհ դալով՝ ունի իր կոչումը, բարոյական կոչումը՝ մարդկութեան հանդէպ։ Այս երկուսը, բարոյական և նիւթական կեանքը, անբաժանելիօրէն կապւած են իրար հետ, եւ այդ կազմում է Խրիմեանի աշխարհայեցողութեան բնորոշ գծնրից մէկը՝ առողջ և գիտական։ ԱԱՆՀՆԱՐԻՆ է, ասում է նա, հացն ու բանն որոշել իրարմէ։ Նոքա այնչափ սերտ կապակցութիւն ունեն իրարու հետ, ինչպէս հոգին մարմնոյն հետ»։

Ո՞րն է բարոյական հիմունքը — սէր, հաւասարութիւն, արդարութիւն, եղբայրութիւն, միութիւն և ընդհանուր մարդասիրութիւն։ Ահա Խրիմեանի պատասխանը։

Աշխարհի միւս հիմքը կազմում է բնական
օրէնքը : Իսկ ի՞նչ է թելադրում այս օրէնքը : —
Մարդիկ բնութիւնից ազատ են, մարդիկ ահա-
ւասար կծնին, հաւասար կմեռնին, բայց ան-
հաւասար կ'ապրին» :^{*)} Նրանք պէտք է նաև
հաւասար ապրին . այս է բարոյական և բնա-
կան օրէնքի թելադրութիւնը : Այստեղ Խրիմ-
եանը գնում և պաշտպանում է բնական իրա-
ւունքի սկզբունքը, որի տաղանդաւոր տեսա-
բանն է Ժան-Ժակ Ռուսսօն և որի ազգեցու-
թիւնը ակնբախ է Խրիմեանի վրայ : Խրիմեա-
նը չի ընդունում, թէ բնութիւնից է անհաւա-
սարութիւնը : «Մի հաւասար, ժողովուրդ այդ
վարդապետութիւնը տիրապետաց ոգին ստեղ-
ծել է, մարդասէր և արդար Աստծուն չէ, ո-
րովհետեւ ընդհանուր մարդկութեան կոչումը
և կեանք՝ ազատութիւն, արդարութիւն և հա-
ւասարութիւն է երկնից առաջ և աշխարհիս
քաղաքակրթութեան օրինաց առաջ»^{**)} : Աստ-
եած մարդկանց հաւասար է ստեղծել, «հա-
ւասար ազնւական» : «Միայն աշխարհին աչք
ու դատաստանը խախր կը գնէ և այնպէս կը
տեսնայ» : «Կը գովեմ զքեզ, եթէ անձնանա-
նաչ լինելով խոնարհամտիս, այլ չեմ ներեր-
քեզ, թէ անչափ նւաստանաս, մինչեւ մոռա-

*) Սիրաք եւ Սամակել, էջ 178.

**) Նոյն տեղը, էջ 39.

Նառ մարդկութեան հանսար պատիւ» *)։
Մարզն ազատ է, և նա պարտաւոր է ամէն
գնով պաշտպանել իր մարդկային պատիւը և
արժանաւորութիւնը. իր մարդկային իրա-
ւունքները։

Այսպէս . այդ երկու օրէնքները , բարոյա-
կան և բնական , անբաժան են միմեանցից ;
Երիմեանը կեանքում , իր գործունէութեան
ընթացքում միշտ էլ այդ է քարոզել . այդ
ուղղութեամբ է ազդել կեանքի վրայ . բար-
քերի ազնւացման վրայ .

Ահա մի բնօրոշ գէպք նրա կեանքից .
1893 թւին էր , երբ նա կաթողիկոսացած ճա-
նապարհուում էր Էջմիածին . Երբ ժամանաւմ
է Երեւան , նրան , ի միջի այլոց . շրջապա-
տում են նաև Երեւանի քահանաները՝ չքեզ
հազնւած : Այս երեւոյթը գրաւում է պարզա-
ւէր Խրիմեանի ուշագրութիւնը և նկատում է .

Այդ ինչ փառաւոր Փարազայ աւնես , տէր
հայր , ես ինքս այդպիսին չունեմ . Աւելի լաւ
է՞ր լինի արգեօք , զրա վրայ ծախսած փողե-
րով հոգայիք ձեր ընտանիքը , կրթութիւն սա-
յիք ձեր որդոց . . . Բոզէք այդ ծազկեայ
զգեստները : Այսօրւանից հազէք պարզ , հա-
սարակ , սեւ զգեստներ : Մտածեցէք աւելի
զարգարել ձեր ներքին , մտաւոր և բարոյա-
կան կողմը , զրոի զարգարանքը մի կողմ Բազ-

*) Ժամանակ էւ Կորինքը իւր , էջ 36 .

նելով»*) :

Այդ բնական և բարոյական օրէնքներով
պէտք է զեկավարւի նաև երկրի իշխանութիւ-
նը, դրանք պէտք է կազմեն պետութեան հիմ-
քերը:

Նա առհասարակ գէմ չէ իշխանութեան.
Նա գտնում է այդ անհրաժեշտ : «Իշխանու-
թիւն ժողովրդին և ժողովուրդ՝ իշխանութեան
միշտ պէտք են աշխարհիս վրայ : Եթէ մին
կամ միւս պակսի՝ կղաղարի կամ կխոտորի ըն-
կերվարութեան կեանք» : Բայց իշխանութեան
մեծ և նւիրական պարտքն է «արգարութիւն
սիրել և օրինաց իրաւացի վճիռը արդարու-
թեամբ ի գործ դնել» : Նրա պարտքն է երկրի
խաղաղութեան վրայ հսկել, «հանապազ հո-
գալ ժողովրդի բարօրութեան, բարգաւաճման
և յառաջդիմութեան համար» : Մի իշխանու-
թեան զօրութիւնը և հաստատութիւնը՝ ար-
դար և հաւասար օրէնքն է : Իշխանութեան
սրբազան պարտականութիւնն է օրէնքը «ճրշ-
տութեամբ, հաւասարապէս գործադրել տկա-
րին և զօրաւորին վրայ, իշխանին և ժողովր-
դին վրայ» **): Մի երկու էջ յետոյ, Խրիմ-
եանը նկատում է . իշխանութեան «առաջին և
վերջին մեծ պարտիքն է լոյս, գիտութիւն և

*) Սիրաք եւ Սամուել, էջ 82.

**) Սիրաք եւ Սամուել, էջ 46.

կրթութիւն տարածել ընդհանուր երկրին մէջ .
իշխանութեան աթոսէն սկսեալ մինչև խոնարհ
ժողովրդի խրճիթը՝ հաւասարապէս լոյս ծա-
ռալել , հաւատալով , որ երկրին բարգաւաճանք
ժողովրդին լուսաւոր կրթութիւնէն կծնի , ինչ-
պէս թշւառութիւնը՝ նրա տգիտութիւնէն» :*)
Մի բնորոշ կէտ ես , որով աւելի ես պարզը-
ւում է Խրիմեանի հայեացքը պետութեան եւ
կառավարութեան պարտականութեան մասին :
Ահա այդ կէտը . «Ինչ որ իշխանութեան պար-
տիքն է , այն է ահաւասիկ ժողովրդին իրա-
ւունք է . այն է տիրապէս ժողովրդին պար-
տիք» (Էջ 60) :

Խրիմեանը դէմ է այն իշխանութեան , որ
զեկավարւում է հետեւեալ յոռի եւ յետադէմ
տեսակէտով — «Ժողովութիթը տգիտութեան և
անզգայ թմբութեան մէջ պահել , որպէսզի նա
կոյր մնայ և չանսաստէ իշխանութեան դէմ» :
Նա դէմ է այն իշխանութեան , որ «գատա-
տանի առաջ նւիրական չի համարի օրինաց
հաւասարութիւն և կթողու , որ դատաւորաց
կամք՝ դատարանին մէջ իրեւ օրէնսդիրք
զնուէ» :

Այսպէս ահա մի շարք գործօններ՝ գի-
տութիւն և լոյս , աշխատանք և հող , հաց և
բան , նիւթական և հոգեկան՝ կապւած են ի-

*) Սիհաք Եւ Սամուել 56—60 .

քար հետ և ազգում են կետնքի վրայ միա-
սին :

Այսպիսի գործօնների շնորհիւ միայն հնա-
րաւոր է կատարել այն «հրաշքը» — վերացնել
օթշառութեան փշերը», զարգացնել ծաղիկ-
ները և ապահովել մարդկային վերածնունդը :

ՉՈՐԾՈՐԴ ԳԼՈՒԽ

Հայ ընտանիքը եւ նրա հիմքը .— Նրա
ներկայ պատկերը .— «Դրախտի ընտանիքը» .—
Դեպի յետ .— Կնոջ գերը :

Հայ ժողովրդի համար նկարում է հայոց
հայրեկը «Դրախտի ընտանիքը» : Ինչ է ներ-
կայացնում այդ իրենից : — Մեր բարոյագէ-
տին չի զրագեցնում ընտանիքի ծագման հար-
ու, ոչ ել նա տալիս է ընտանիքի զարգացու-
մը կամ քնաղատում այդ ինստիտուտը : Խը-
րիմեանը նկարում է միայն այն ընտանիքի
պատկերը, որ նրա ցանկացածն է, զրւած
ճշմարիտ, բնական և բարոյական հիմունք-
ների վրայ : Այստեղ էլ նոյն ընդհանուր տե-
սակէտն է, ինչ մինչեւ այժմ աեսանք :

Ամուսնութիւնը, ըստ Խըրիմեանի, բնա-
կան օրէնք է, նա մարդու բնութիւնից ան-

քաժան է : «Ամուսնութեան օրէնքը մարդկութեան հիմքն է . ընութեան մէջ խորապէս հաստատւած և ոչ մի ձեռք չի կարող խախտել , և եթէ խախտի , մարդ իւր կեանքովը կը չքանայ» : Իսկ ընտանիքի հիմքը , ամուսնութեան բուն օրէնքը բնական սէրն է : «Բնական սէրն է միայն , ասում է Խրիմեանը , բոլոր բնութեանց կենդանատու հոգին և զօրութիւն , եթէ չկենդանացնէ սէրը՝ բնութիւնը կմեռնի : Հզօրագոյն է սէրը երկու ամուսնաւոր սիրելեաց մէջ . երկու շնչով կը շնչէ , երկու սրտով կմիանայ , երկու լեզով կխօսի , երկու ոգով կապը , երկու ձեռքով կը զօրանայ , եթէ մինպակսի՝ սէր կմեռնի , զի սիրոյ կեանքը երկու սրտից միութիւն է» *) : Այր և կին ներկայանում են ամոլակիցներ , հաւասար ընկերներ և աշխատակիցներ կեանքում :

Այսպէս , ընտանիքի հիմքում պէտք է գրւած լինի բնական . բարոյական և բանական օրէնքը :

«Մանիր զքեզ» , Խրիմեանը այս իմաստուն առածն է առաջարկում գրւած ունենալ ընտանիքի «սրահի սիմից» վրայ , որպէսզի երբեք չմոռացւի , այլ միշտ աչքի առաջ լինի , կեանքի մէջ առաջնորդող գաղափար հանդիսանայ : Այդ իմաստութիւնը թելադրում է :

*) Դրախտի ընտանիք , էջ 119 .

լինել խոհական, վարել բնական և բանական կետնք, լինել համեստ, չափ ու սահման դնել տնտեսական կառավարութեան վրայ, հացը չափով ուտել, հանգերձը չափով հազնել. Այս պէտք է լինի առաջնորդող ճշմարտութիւնը. Թարդը մի անգէտ մանուկ է, կվազէ միշտ դէպի սիրուն խաղալիկներ» *) :

Հայոց Հայրիկը ցաւով է նկատում, որ հայ ընտանիքը հեռացել է այդ շաւղից, ցաւով պիտում և նկարում հայ ընտանիքի հիւանդ ու հիւծւող կերպարանքը: Եւ նրա այդ գրւածքի, «Իրախատի ցնտանիքի» նպտակն է ցուցազբել հենց հայ ընտանիքի այդ հիւանդ կերպարանքը, որ՝ ինչպէս հայելի՝ հայ ժողովուրդը գնի իր աչքի առաջ և նայի:

Բայց նա միայն դրանով չի բաւականանում: Նա ցոյց է տալիս նաև բուժելու համբան, մատնանշում՝ դարմանելու միջոցները: Հայ ընտանիքի մէջ մտել են մի շարք մոլութիւններ, զեզիութիւն և ցոփութիւն, նորասիրական պերճանքներ... Եւ ցաւալին այն է, նկատում է Խրիմեանը, որ այս բոլորը մտել են հայ ընտանիքը որպէս քաղաքակրթութիւն: «Արեւմտեան քաղաքակրթութեան հեղեղի ջուրը շատ խանուրդ և պղտոր է, չարն ու բարին, լոյսն ու խաւար՝ զուգընթաց»:

*) Իրախատի ցնտանիք, եջ 119.

Նախնական, բնական և մաքուր վարքն ու
բարքը, ընտանեկան սրբութիւնը վերացան և
մարդիկ ընկան անառակութեան մէջ:

Այս գրութիւնից դուրս գալու համար պէտք
է մտցնել ընտանիքում քաղաքակրթութեան
ճշմարիտ տարերքները, այսինքն՝ ճշմարիտ
գիտութիւն, կրթութիւն և լուսաւորութիւն:
Նա քարոզում է գնալ դէպի յետ, դէպի բնա-
կան վիճակը: Անկասկած, ոչ յետ դէպի բար-
բարոսութիւն, այլ յետ դէպի բնական մա-
քուր կարգերը, ճիշտ ժան-ժակ Ռուսսօի ի-
մաստով: Նա միանգամայն անհանգութելի է
համարում այն հիւանգոտ երեւոյթը, որ մայ-
րը, թէև ստինքները լի կաթով, իր մանու-
կին յանձնում է օտար կաթին և օտար գրկին:
Նա արժանի չէ մայր կոչւելու. ամայր մի կա-
րող չէ այս պարտիքն զեղծել, զոր թէ բնու-
թեան օրէնք և թէ բնական սէր՝ անեղծ գծեր
են մօր սրտին և կուրծքին վրայ»: Վերջա-
պէս, բնութեան անփոփոխ օրէնքն է այդ
պարտիքը դրել մօր վրայ:

Կինը մեծ դեր և արժէք ունի կեանքի
մէջ, յատկապէս ընտանիքում: Հստ նրիմ-
եանի, կինն ևս այր մարդու հաւասար է եւ
հաւասար ընդունակ առաջադիմելու, մարդ-
կութեան օգտակար լինելու: Թայց նրա աշ-
խարհը գլխաւորապէս ընտանիքն է. ընտանե-
կան դաստիարակութիւն, կրթութիւն և տըն-

տեսութիւն առանին կառավարութեան : «Մայրերն են միակ առաջին վարժապետ և կրթիչ իրենց զաւակներու՝ հաւասարապէս թէ ազգիկների և թէ տղաների» : Խրիմեանը իր գործունէութեան ընթացքում միշտ էլ ուշադրութիւն է դարձրել օրիորդաց կրթութեան վրայ : Եւ այդ այն տեսակէտից էր նա անհրաժեշտ գտնում, որ մայրերն են երեխաների առաջին գաստիարակները : Միայն դպրոցական ուսումը անբաւարար է, առաջնակարգ կարեւարութիւն ունի նաև ընտանեկան ազատ ու բարոյական գաստիարակութիւնը :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

«Ժամանակ եւ խորհուրդ իւր» .— Ժամանակի տեսութիւնը եւ պրօգրեսի գաղափարը .— Ժամանակը եւ մարդը .— Հանճար եւ ընկերային զօրութիւն .— Խրիմեանի հասարակական իդեալը :

I

Աշխարհը, ներկայ աշխարհը վատ է, ունի չատ յոտի կողմեր : Ներկայ աշխարհի վրայ թշուառութիւնը համատարած է, մարդիկ ունեն անթիւ մեղքեր, նրանք մշտապէս իրար

քզկտում են, ծւիկ-ծւիկ անում՝ նիւթական շահի յետեւից վազ տալով։ Ներկայ ընկերութին կեանքը վիրալից է, իսկ այժմեան քաղաքակրթութիւնը շիտակ և ճշմարիտ չէ։

Այս չափով մեր բարոյագէտը յոտեանէ, նրա կենսահայեցողութիւնը՝ յոռետեսական։ Բայց նա հաւատում է խորապէս, որ ամէն ինչ փոխւելու է, և փոխւելու է գեղի լաւը, գեղի ազնիւը և բարձրը։ Այդ շունչն է Փշում նրա իւրաքանչիւր բարոյագիտական գրւածքից։

Մեր իմաստասէրը իր «Փամանակ» եւ խանուրդ իւր» իմաստասիրական ուշագրաւ աշխատութեան մէջ տալիս է մի ամբողջ և իւրայատուկ տեսութիւն ժամանակի մասին։ Փամանակի տեսութիւնը սերտօրէն կապւած է պրօգրէսի զաղափարի հետ։ Նա ճանաչում, ընդունում է պրօգրէս մեր աշխարհում, մեր ընկերային կեանքում, ազգերի պատմաւթեան մէջ։ Այդ պրօգրէսն անհրաժեշտ է և անխուսափելի, թէև տեղի է ունենում դանդաղ և ծանր երկունքով, թէև ընթանում է գանգերի և ազգերի վրայով։

Փամանակը մի հզօր և հուժկու ոյժ է։ Փամանակը ամենակարող է։ Փամանակը մեծ աշխարհակալ է «աշխարհի բոլոր գոհերու, բոլոր թաղերու վրայ»։ Փամանակը բոլոր մարդկանց «միահամուռ կը վարէ գէպի գե-

բեզմանին վիճը»։ Ժամանակը հանուր մարդկութեան գործերի մեծ գիւանագէտն է, նա' է արձանագրում մարդկային կեանքի հաշիւը, ինչպէս և բոլոր թագաւորների հաշիւը։ Ժամանակը մի աւերիչ ոյժ է։ Նրա ոյժի տակ ամէն ինչջախջախւաւ, փշուում, տրորւում է։ Եւ ինչո՞ւ. որովհետեւ նրա կառքի անհւները կարծրակուռ երկաթէ են և ժանիքները պողպատէ։

Բայց, միւս կողմից, ժամանակը նաև յեղափոխիչ-ստեղծագործական ոյժ է։ Նա մի կողմից՝ աւերելով, ոչնչացնելով հինը, վատը և յոռին, միւս կողմից՝ ստեղծագործում է նորը, ազնիւը և բարձրը։ Ժամանակը խորտակելով հինը, դիմում է դէպի քնական եւ բարոյական կարգերը, դէպի ճշմարիտ քաղաքակրթութիւնը։ Մի տեսակ դիալեկտիկական պրօցէս է այդ, որ անընդհատ կատարւում է։

Մարդն մարդուն գայլ։ Մարդն է աշխարհի համատարած թշւառութեան բուն աղբիւրը։ Նա ինքն է իր սեփական թշուառութեան հեղինակը։ Նա է աւերիչ, սպանիչ գործիքներ հնարում միմեանց ոչընչացնելու համար։ Այդ բոլորը նա անում է գիտակցաբար կամ անգիտակցաբար։ Բայց այդ ամէնը ոչինչ են ժամանակի ոյժի առաջ։ Մարդն անզօրէ ժաժամանակի հանգէտ։ Վերջնական յաղթանակը պատկանում է ժամանակին։ Վերջիվեր-

ջոյ, թէեւ գարերի ընթացքում, յաղթական ժամանակը պատերազմի քանդով ձեռքը կարճելով, կընդարձակէ խաղաղութեան եւ յառաջդիմութեան ձեռքը, և սա է հէնց ժամանակի պործ և խօրհրդանշան, որ աշխարհաքակւելով և շինեելով միշտ կառաջադիմէ. անշուշտ ամէն հնութիւն պիտի քանդւի: Մեր աշխարհում գեւ և ամէն բան երերուն է և անհաստատ, և ինչ որ առաջամիտ հերոսներս աշխատում են մի ձեռքով շինել, «խարութիւն, հնութիւն և՛ նախապաշտունք միւս ձեռքով կը քանդեն»: Բայց նա չի ցաւում, որ քանդում են, և նրա հաւատը լաւագոյն ապագայի վերաբերմամբ մի զայրէեան անգամ չի տառանւում: Ինչո՞ւ.— «Քանդողներ միշտ աւերակաց տակ կը մնան, զերեզման կը ծածկէ զիրենք և նոր-նոր շինողներ կծնին»: Հէնց սկզբից ի վեր այս է աշխարհի գործը. էական կողմը—մարդիկ միշտ շինելով և քանդելով առաջ կերթան, Բայց վերջնական յաղթութիւնը «շինողներուն է»: Իսկ ինչո՞ւ. որովհետեւ նրանց գործիքներն են զիտութիւն, քաղաքակրթութիւն և արդարութիւն, իսկ քանդողների՝ տպիտութիւն և հնութիւն, Մէկի առաջնորդն է լոյս և զիտութիւն, իսկ միւսի՝ խաւար. մէկի իշխանութիւնն է ազատքէնքը, իսկ միւսի՝ սուտը, բռնութիւնը:

Այս պատասխանը, ուր կայ ամբողջ մի

շատարակական թէօրիա, վերին աստիճանի բնորոշ է Արիմեանի աշխարհայեցողութեան համար։ Ամէն տեղ նա յանդում է միեւնոյն եզրակացութեան, միեւնսյն լուծման։ Այսպէս երկու տեսակի ոյժեր՝ քանդող և չինող՝ մշտապէս յաջորդում են իրար ազգերի կեանքում, պատմութեան մէջ։ Բայց յազթանակը չինողներինն է և, հետեւապէս, ժամանակի առաջինաղաց ընթացքը, մարդկութեան պրօդրէսը ապահովւած է։ Դրանում խորապէս համոզւած է հայ բարոյագէտը։

Այդ պրօդրէսը ապահովւած է ընդհանրապէս հանուր մարդկութեան, ինչպէս և մեղ Արեւելքի համար։ — «Ժամանակը վաղուց է, որ թողուց Արեւելք և դնաց Արեւմուտք, ժամանակ միշտ յԱրեւմուտս յարատե չի մնար։ Մի օր կդառնայ յԱրեւելս և զայն ևս իր հնութենէն կվերանորոգէ»։ (Ս. և Սմ. էջ 185)։

Հստ Խրիմեանի, պրօդրէսի մի կարեւոր ազդակն է ընկերային ոյժը, միութեան գորութիւնը, հաւաքական աշխատանքը։

Նա մեծ տեղ է տալիս ինքնաշխատութեան և քարոզում է յոյս չգնել ուրիշի վրայ, այլ միասին իր սեփական ոյժերի, իր սեփական աշխատանքի վրայ։

Բայց, ըստ Խրիմեանի, անհատական աշխատանքը, անհատ մարդու գործը, աւելի ևս մեծ ոյժ և ազդակ է դանում, եթք զբան

միանում է ընկերային ոյժը։ Մի մարդ չի կարող մի քաղաք շինել։ մի թագաւոր չի կարող իրենից մի տէրութիւն կազմել՝ առանց ժողովրդի, ինչպէս և մի ծաղիկ՝ գարուն բերել, մի մեղու՝ մեղը շինել . . .

Այս հարցն իմաստասիրելիս՝ Խրիմեանը շահափում է հանճարի և ընկերային զօրութեան հարցը և տալիս է մի ինքնատիպ ըմբռնում՝ այդ երկու ազդակների փոխ-յարաբերութեան մտաին, մի ըմբռնում, որ համապատասխանում է ժամանակակից գիտական տեսակէտին։ Այդ ըմբռնման հիմքում դրւած է կօօրգինացիայի, փոխադարձ լրացման սկզբունքը։

Արժէ մի փոքր հանգամանօրէն կանգ առնել այս հարցի վրայ։ —

Հստ Խրիմեանի, գաղափարի ազբիւրը հանճարն է։ այլ խօսքով՝ մեծ հոգի և բարձր իմացական անհատն է յղանում նոր միտք կամ գաղափարը, իսկ ընկերային ոյժի շնորհիւ նա արմատանում է ընկերային կեանքում։

Բայց ո՞ւր է տանում ժամանակի յարատեւ յառաջընթաց շարժումը, ո՞ւր է գիմում պրօդրէսը, ի՞նչ է ապահովւած շինողների յաղթանակով։ — Ազգերի ճշմարիտ ու իրականականարութիւնը։ Խրիմեանի հասարակական իտէալն է այդ։ Նա հաւատում է զրան և ունի որոշ հիմունքներ հաւատալու։ — Նախ այդ

է ասո՛ւմ պատմութիւնը, ազգերի պատմութեան ընթացքը և երկրորդ՝ այդ ապահովւած է գիտութեան և աւետարանի գերապանծ սիրոյ շնորհիւ։

Մեր բարոյագէտը հաւատում է, որ վերջի վերջոյ կխաղաղւեն բոլոր հակառակ տարերքները ամէն մի ազգ ապրելու ազատ իրաւունք ունի և տեղ՝ արեւի տակ։ Ոչ ոք, ո՞չ մի ազգ իրաւունք չունի խախտել, բանաբարել այդ իրաւունքը, որ սրբազան է միանգամայն։ Ամէն մի ազգ պէտք է ազատօրէն զարգանայ։

Բոլոր ազգերը կազմում են մի հզօր գաշնուկցութիւն, և նրանք միմեանց հետ կապւած են մի սերտ կապով. այս կապն է «անխոտիր հաւասարութիւն իրաւանց և պարտուց մէջ, հաւասարութիւն երկրին օրինաց առաջ, հայրեննեաց ժառանգութեան մէջ, հաւասարութիւն փառաց և պատռոյ մէջ, քաղաքացիութեան և ազնւութեան, ուսման և առաջադիմութեան մէջ»։ Նա հաւատում է, որ ժամանակը բերելու է այն ոսկէ դարը, «յորում գոռոզ առիւծն՝ աշխատաւոր եղին հետ բնակի, ինձն ուլին հետ մակազի, բարձր գահեր հին հպարտութենէն խօնարհին և ժողովուրդ ազատութիւն համբուրէ»։ Եւ այդ ազատ ու հաւասար կարգերի մէջ իւրաքանչիւր ազգ պէտք է զարգանայ անկախ։ ինքնուրոյնա-

բար և անկաշկանդ : Հէնց այս է այդ հզօք
Դաշնակցութեան իմաստը :

Այս հիմնական տեսակէտը, այս բարձր
մարդկային գաղափարն է միշտ էլ հանդիսա-
ցել Խրիմեանի կեանքի նշանաբանը, նրա ա-
ռաջնորդը : Նա միշտ սիրել է ուրիշին, ճանա-
չել և պաշտպանել նրա անքակտելի իրա-
ւունքը :

Խրիմեանը գերազանցապէս հայ մարդ էր
և մեծ հայրենասէր : Այդ անկասկած է : Նրա
խոհերի, զործունէութեան հիմքը կազմում էր
իր ժողովուրդը :

IV

Բայց Խրիմեանը միաժամանակ մեծ մար-
դասէր էր : Սրեւելեան գէրզիչը ունէր լայն
սիրու, ունէր մտքի և հոգու մեծութիւն : Այդ-
պիսի մարդը չէր կարող նեղ հայրենասէր եւ
հայասէր լինել — մի հայամոլ : Ազնիւ հայրե-
նասիրութիւնը և բարձր մարդասիրութիւնը
մի գեղեցիկ ներգաշնակութիւն էին կազմում
վեանի բարոյագէտի անձնաւորութեան մէջ :
Այդ տեսակէտից թերեւս ոչ ոք այնպէս ամ-
բողջական անձնաւորութիւն չէր, ինչպէս Խը-
րիմեան Հայրիկը : Թող նա՛ խօսէ . «կ'ուզե՞ս
ճշտիւ իմանալ, ի՞նչ է ընկերաիրութեան պար-
տիք, ո՞ր չափ և մինչեւ ո՞ւր . և ո՞վ է մեր
ընկեր, միայն մեր ընտանիք, մեր ազգա-

կա՞նք, մեր զբացի՞ք, մեր հայրենակիցնե՞ր
կամ այն մարդիկ, զոր մենք կճանաչեմք։
Աչ, Աւետարանի ընկերսիրութեան պարտիքը
ընդհանուր մարդասիրութիւնն է»։ Եւ այդ
պէտք է տարածւի բոլոր մարդկանց վրայ։
Հիսարելով երբեք ո՛չ ազգ, ոչ կրօնք, ոչ մեծ,
ոչ փոքր, ոչ ծանօթ և ոչ անծանօթ, այլ ըն-
կեր համարել հաւասարապէս ամէն մարդու,
որ իւր նմանակից պատներ կը կըէ»։ Մի աւելի
ևս գեղեցիկ, աւելի բարոշ կտոր։ Օտշխար-
հիս թշւառները մի զններ թէ ո՞վ և ի՞նչ ազգ
է։ բաւական է տեսնաս թէ նոքա ևս քեզ
նման մարդ են։ քեզ ինչ փոյժ նրա լեզուն և
կրօնք։ Մեծ քան զայս սէր ոչ զոյ»։

Նա այդպէս էլ եղել է կեանքի մէջ։ Նա
չի քարոզել միայն, այլ եւ գործով ցոյց ար-
ւել։ Նա շատ լաւ գիտէր, որ գործն է մեծ
առաջնորդը ու դաստիարակը և ոչ թէ լոկ
խօսքը։ Խրիմեանը օգնութեան էր հասնում
ամէն մէկին, ամոքում իւրաքանչիւրի վիշտը
անխոտիր, առանց կրօնի և ազգի խորութեան։
Մանաւանդ հասարակ, մշակ, աշխատաւոր
ժողովրդին։ Նա տալիս էր ժողովրդին իրօք
ամէն ինչ։ Նա ճշմարիտ մարդասէր եւ քրիս-
տոնեայ էր։ Խրիմեան Հայրիկը մի զոյգ գուլ-
պա ունէր, մի հատ շապիկ։ Աւելին նա տա-
լիս էր թշւառին, իսկ թշւառները անթիւ են
մեր անիրաւ աշխարհօւմ։

Նա այնպէս էր գրել իրեն, այնքան մատչելի : որ ամէն մէկը կարող էր խնդրել, անգամ պահանջել նրանից : Փռղ ասած բանը նա չունէր : Հայրիկի գրպանը միշտ էլ գագարկ էր : «Աշխարհիս մէջ երեք մարդ կայ, որոնց գրպանը միշտ ծակ պէտք է մնայ— Սուլթան Ազիզ, Գրիգոր աղա և Խրիմեան Հայրիկ» , ասում էր նա յաճախ :

Եւ իրսկանութեան մէջ նա հէնց այդպէս էր : Նա ուղղանի կօմմունիստ էր, մասնաւոր սեփականութիւն ասած բանը չունէր անկասկած՝ նա կօմմունիստ էր ոչ տեսական իմաստով, այլ իր վերաբերմամբ, գործով : Նա գէմ չէր առհասարակ մասնաւոր սեփականութեան, թէեւ այդ սեփականութիւնը պէտք է լինէր այն չափով, որ չդառնար մի ուրիշի շահագործման աղբիւր և հիմք : Մի աւելորդ կոպէկ չէր մնում Խրիմեան Հայրիկի մօտ, նա տալիս էր թշւառին, չունեւորին :

Մեր բարոյագէտն այնքան մարդասէր էր, որ սիրում էր անգամ քիւրդին, ա'յն քիւրդին, որ այնքան անիրաւութիւններ էր արել և անում էր հայ ժողովրդին : Այս բանը ապացուցանող շատ փաստեր կան : Եւ հէնց այդ պատճառով էլ Խրիմեանը բոլորի կողմից անխտիր համակրանքի, անգամ պաշտամունքի առարկայ էր— հայի եւ թուրքի, ասորու եւ քրդի : Իրսկութիւն է, որ 1879-80 թւի Վաս-

պուրականի սովի միջոցին Խրիմեանը օգնում
էր անխտիր թուրքին և քրդին։ Նա սուրբ
մարդու հռչակ ուներ քրդերի մէջ։ Ահա ինչ
բնորոշ դէպք են պատմում։ Խրիմեանի դէմ
լարւած էին շատերը մեծերից, աղաներից և
ամէն կերպ աշխատում էին ոչնչացնել նրան։
Նրանք յաճախ կաշառել են քրդերին՝ Հայրի-
կին սպանելու համար։ Մի անգամ, երբ նա
Վարագից վերադառնում էր միայնակ Վան,
մի քիւրդ՝ գարան մտած՝ ուզում էր նրան ըս-
պանել։ «Երբ թշնամին նկատեց Հայրիկին,
պատմում է Լինչը, և վեր առաւ իւր հրա-
ցանը, իր անդամները բռնւեցան երկիւղով,
թեւերը ցնցւեցան կախարդական գաւազանի
պէս և ինքն ընկաւ ծունկերի վրայ իւր զոհի
առաջ, որի ակնարկներին անկարող էր եղած
հանդուրժել»։

Խրիմեանը յատկապէս սիրում էր թշւառ,
հողագործ քրդերին, որ այնպէս հարստահար-
ւած էին, ինչպէս հայ մշակ ժողովուրդը։ Եւ
եթէ նա կատարում էր վայրագութիւն, այդ
գլխաւորապէս բէգերի գրդմամբ և իր տղի-
տութեան պատճառով։ Խրիմեանը անհրաժեշտ
էր համարում բանալ քրդերի աչքերը, դըպ-
րոցներ հիմնել նրանց համար, գիտակցութեան
բերել, որպէսզի հասկանան, թէ ո՞վ է իրօք
նրանց հարստահարողը, նրանց թշնամին։

Փաստ է, որ սովից ազատելով, շատ

քրդեր կամենում էին քրիստոնէութիւն ընդունել, բայց Խրիմեան Հայրիկը կտրուկ կերպով մերժել է:

Բայց այստեղ մի կէտ չպէտք է մոռացութեան տալ: Խրիմեանի ընկերութիւնը և մարդասիրութիւնը տարբերւում էր այն քրիստոնէական մարդասիրութիւնից, որ ասում է, թէ՝ չարին չարօվ մի պատասխանիր: Խրիմեանը դէմ էր այդ մօրալին: Ներկայ կեանքի, ներկայ աշխարհի իմաստութիւնը չէ այդ: Խրիմեանը, ճիշտ է, պահանջում էր ամէն մի վարմունքի մէջ լինել արդար և ճշմարիտ, ինչպէս և յարգել ամէն մէկին, որ ունի մարդու կերպարանք: Բայց նա, միւս կողմից, անխնայ էր գէպի նա, ով կյանդգնէր վիրաւորել մարդկային արժանապատւութիւնը, որ կյանդգնէր խլել քո ճակատի քրտինքի արդիւնքը, սպառնալ քո գոյութեանը և վրդովել քո խաղաղութիւնը: Այդպիսի գէպօւմ պէտք է խստօրէն պաշտպանել սեփական իրաւունքը, սեփական աշխատանքը եւ գոյութիւնը: Այլապէս անհնարին է ապրել այս աշխարհում:

Խրիմեանի «Վանգոյժ»-ը և «Հայզոյժ»-ը ոզբերգ չեն միայն, այլ մի հուժկու բողոք՝ ուղղւած տիրող բռնութեան գէմ: Նա կոչ է անումինքնապաշտպանութեան միջոցներ ձեռք առնել (մարդակերպ գաղանների) գէմ: Հայ մեծ բարոյագէտը միաժամանակ մեծ յեղա-

փոխական էր : Նա յորդորում էր զէնքը ձեռքին մեռնել և պաշտպանել իր ազատութիւնը, «Հայոց աշխարհի ազատութիւնը» («Հայոցոյն») . աւելի նախընտրելի է մեռնել դիւցազնական մահով,քան ունենալ ստրկական կեանք : Նա նախառելով հային, ասում է . «միթէ գոեհաց կա՞ւ ես դու աշխարհիս երես . ես էլ կդատիմ զքեզ, թէ այդչափ ստրկանաս և աղարտես մարդկութեան ազատ պատիւ» :

Այսպիսով՝ մեր առաջին և մեծ յեղափոխականն մի անգամ և ընդմիշտ դժեց հայ ժողովրդի ազատագրութեան ուղին . դա կռի, յեղափոխութեան ուղին էր : Խրիմեանն այլ միջոցների չէր հաւատում . նա չէր հաւատում, թէ «խաղաղասէր Լօնտոնը» օգնութեան կդայ հայ ազգին :

Նա իր տեսակէոը յատակ և չեշտակի ձեւակերպեց Բերլինի պատմական վեհաժողովից յետոյ : Խրիմեանը, ինչպէս յայտնի է, ազատութիւնը համեմատում է հարիսայի հետ, իսկ այդ ձեռք բերելու համար անհրաժեշտ են երկաթէ շերեփներ, այսինքն՝ զէնքեր, իսկ մենք ունեինք միայն թղթէ շերեփներ :

Այգ պատմական օրից արդէն Խրիմեանի նոյնքան պատմական խօսքը դարձաւ նշանաբանը մեր յեղափոխութեան :

Մեր աշխատութիւնը փակում ենք Խրիմեանի խօսքերով, որ վերին աստիճանի բնորոշ


են նրա անձնաւութեան և աշխարհայեցու-
ղութեան համար :

Բերլինի պատմական վեհաժողովից յետոյ
էր, ուր ոչինչ չ'ստացան հայերը : Բոլոր պատ-
գամաւորները, ինչպէս և Խրիմեանը, հրաւիր-
ւած էին ճաշի :

— Մեր խնդիրը չեն կատարեր, բայց մե-
զի ճաշի հիբաւիրեն, դամութեամբ նկատում
է Խրիմեանը :

Նու չեք կամենում զնալ, բայց սահպում
են նըստ, անյարմար գտնելով վերժումը : Եւ
նա այս առանում է հետեւեալ խիստ բնորոշ
խօսքերը :

— Աւքեմն, այսօր Խրիմեանը ալ տիպլո-
մատ պիտի ըլլայ, Եւրոպա եկողը չի կրնար
դիպլոմատիան ամէն բանի վրայ կթագաւո-
րէ : Կանանէնք արդիօք այն հիմնալի օրը,
երբ Եւրոպան ոգեւորւած մարդաբական լայն
գաղափարներով, քրիստոնէաւան անողարտ
զգացումներով, ձեռք կը եարկառէ խեղճին,
հայւած ածին, ընկածին՝ առանց դիպլոմատիա-
կան հայեացքների, առանց քաղաքական յե-
տին ժտքերի, այլ զուտ մարդասիրական զգա-
ցումներից զրդւած : Միայն այն ժամանակ
քաղաքանիւթութիւնը կտանի իր վերջնական
յաղթանակը, երբ կը հասնի այդ օրը : Ես հա-
ւատում եմ որ կը հասնի :



2. 1. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1. 1.

2. 1. 1. 1. 1. 1.

ՄԱՏԵՆԱՏԱՐ «ՅՈՒՍԱԲԵՐ»

Առօս ՏԵՍԱԾ ԵՆ

- 1.— ՀՐԱՄ ԶՐԱԴԱՑԸ, Հ. ԶՈՒՏԵՐԺԱՆ 2 Եփին
Թրգմ. Գ. Մխիթարյան
- 2.— ԻՆՉ ԶԵՐ ԵԿ ԻՆՉ ԶՊԻՏԻ ԼԻՆԻ
ՄԵՐ ՈՒՂԻՆ Վ. Նաևասարդեան 1 Եփին
- 3.— ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԿՆՃԻՌԸ Թուքէն 6 ե. դ.
Նախարան՝ Վ. Նաևասարդեան
- 4.— Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՆԵԼԻՔԸ Վ. Նաևասարդեան 8 ե. դ.
- 5.— ԵՐԿՐՈՒ ԱՄԻՍ ԲՈԼՇԵՎԻԿԵԱՆ
ԲԱՆՏՈՒՄ Յախչի եշխանեան 10 ե. դ.
ԿԵՆԱՌՈԳՐԱԿԱՆ զՃեր՝
Վ. Նաևասարդեան
- 6.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ «ՀԻԿԻԻԴԱՑԻԱՆ»
(Բալշեւիկժի առանձիւութեան առեթով)
Վ. Նաևասարդեան 7 ե. դ.
- 7.— ԷԶԵՐ ԻՄ ՕՐԱԳՐԵՆ Գ. Նժղեն 5 ե. դ.
- 8.— ՀՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵԿ
ԴԵՄՈԿՐԱՏԻԶՄԸ Վ. Նաևասարդեան 2 ե. դ.
- 9.— ԹԵՐԵԶ ՌԱՔԵՆ Էմիլ Զօլա
Թրգմ. Գ. Մխիթարյան 15 ե. դ.
- 10.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՈՒՂԻՆ Վ. Նաևասարդեան 7 ե. դ.
- 12.— ՀԱՅ ՄԻՏՔԸ Ե. Ֆրանցեան 3 ե. դ.

ԳԻՆ 3 Ե. Դ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Ե

11.— ԿԱՅՍՐ

Լ. Շահր